

Հ Ա Ն Գ Ի Ս Ս

ԳԵՐ. Տ. ՌՈՒԻԲԷՆ Ս. ԱՐՔԵՊՍ. ԳՐԱՄԲԵԱՆԻ
ՄԻԱԲԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետէն Ս. Աթոռոյս Գեր. Տեղապահ Ս. Հօր ուղղուած հեռագրէ մը լսեցինք Գեր. Տ. Ռուբէն Ս. Արք. Դրամբեանի մահուան գոյժը, որ մանաւանդ այս օրերուն — ուր անմիջական յաջորդութեամբ շիջան կեանքերը մեր եկեղեցւոյ հոյլ մը բարձրաստիճան եկեղեցականներուն — կը համակէ մեզ աւելի քան խրունկ վշտով ու ցաւով :

Հանգուցեալ Արքազանը ծնած էր Հին Պայազիտի մէջ ու աշակերտած Ս. Էջմիածնի Գէորգեան ձեմարանին : Ծնորհիւ իր հայրենի քաղաքին եղած է քաջ-Քրտագէտ, ու մասնաւոր ծրագրով մը ան հայերէնէն բրտերէնի վերածած է, շատ մը Հայ Գրական գործեր ու դասագրքեր. եղած է ուշիմ, զարգացած ու եփուն անձնաւորութիւն, մտէն տեղեակ մեր մշակոյթին, ու մատենագրական պատմութեան, ու լաւ բնմբասաց

1940-ական թուականներուն կը վերադառնայ իրեն շատ սիրելի Մայր Աթոռը — Ս. Էջմիածին — ուր վարդապետ կը ձեռնադրուի Մայր Աթոռոյ Տեղակալ Ամեն Տ. Գէորգ Ս. Արքեպոս. Զէօրէքեանէն, որուն կաթողիկոսացումէն յետոյ, 1945-ին կը ստանալ եպիսկոպոսական ձեռնադրութիւն, որմէ յետոյ կը կարգուի Առաջնորդ Պարսկաստանի Թավրիզի թեմին : Վերջին երկու տարիներուն կը գտնուէր Ս. Էջմիածին ու անդամ էր Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգ. Խորհուրդին : Իբրեւ աթոռանուէր ու ժողովրդանուէր եկեղեցական, ան ունէր իր հետ սէրը, Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին ու հաւատացեալ ժողովուրդին :

Ի սրտէ կ'աղօթենք որ եկեղեցւոյ այս մշակներուն փոխարէն Աստուած յարուցանէ ինոր ու բոլորանուէր մշակներ, եւ Ս. Հոգիին մխիթարութիւնը պարգեւէ Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գէորգ Զ. վեհ եւ ձեռունազարդ Հայրապետին, որ յանձինս Տ. Ռուբէն Արքազանի կը կորսնցնէ իրեն օժանդակ կարեւոր ոյժ մը :

Թող Տէրը լուսաւորէ հոգին հանգուցեալ Արքազանին :



Ցաւով կ'արձանագրենք յանկարծական մահը Բեթղեհէմի Ս. Ծննդեան վանքի մեր միաբաններէն Ուրարակի Տիգրան Դարբինեանին, որ տեղի ունեցաւ 1952 Փետր. 11ի գիշերուան ժամը 11-ին :

Հանգուցեալը ծնած էր Սարիսատ (Պարսկաստան) 1888-ին եւ մեր աշխատաւոր միաբանից ուխտին անդամակցած էր 1950 Մարտ 28-ին : Իր բարեհամրոյր եւ հեզ նկարագրով իրեն հետ ունէր բոլորիս համակրանքը :

Իր թաղմանակամ կարգը կատարուեցաւ 12 Փետրուարին Ս. Ծննդեան Տաճարին մէջ. որմէ յետոյ իր մարմինը ամփոփուեցաւ տեղւոյն Հայապատկան գերեզմանատան մէջ :

Հանգիստ իր հոգիին :



Դարձեալ ցաւով կ'արձանագրենք մահը Բեթղեհէմի Ս. Ծննդեան վանքի աշխատաւոր միաբան Տիգրան Ստեփան Գուլումեանին. որ տեղի ունեցաւ 24 Դեկտ. 1951-ին յ. մ. ժամը 4-ին :

Ծնած էր Պրուսա 1885-ին եւ Ս. Աթոռոյս միաբանական ուխտին մասնակցած 22 Սեպտ. 1942-ին : Ժամանակ մը Ս. Յարութեան Տաճարին մէջ ծառայելէ յետոյ, վերջին տարիներուն կը ծառայէր Բեթղեհէմի վանքին մէջ, եր մեռնի իր ետին ձգելով յիշատակը եկեղեցանուէր ու բարի ձեռուկին :

Իր թաղման արարողութիւնը կատարուեցաւ 25 Դեկտ. ին Ս. Ծննդեան Տաճարին մէջ, իսկ մարմինը ամփոփուեցաւ տեղւոյն մեր գերեզմանատան մէջ, — Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի :

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem, Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Hagop Vartanian, Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

